երկրի վերայ արշաւելու. Հայաստանի կառավարիչը կատարեց հրամանն։ Վալիդ պարտաւորեցրեց Ասորիքի ժողովրդին՝ զօրք ուղարկել Հայաստան, բազմացրեց (պատերազմական) մեքենաները եւ մեկնեցաւ Միջագետքի կողմերը, որտեղից դիմեց յունաց երկիրը։ Մուսլիմները ճակատեցան յունաց հետ, սոքա հալածական եղան, բայց ապա՝ յետ դարձով՝ ի փախուստ դարձուցին մուսլիմներին։ Ատուած հալածեց յոյներին, որոնք մտան Թուան քաղաքը. մուսլիմները պաշարեցին եւ առան այն առաջին Ջումադայ[1] ամսին։

91 թ. Վալիդ յետ կոչեց իւր հօրեղբայր Մուհամեդ ի. Մրբվանին Միջագետքից եւ Հայաստանից եւ նշանակեց այս երկրների վերայ իւր եղբայր Մասլամայ ի. Աբդուլմալիքին։ Մասլամայ յարձակեցաւ Թուրքաց վերայ Ատրպատական դաւառում եւ հասաւ մինչեւ Բաբ, նուաճելով քաղաքներ եւ ամրոցներ, որոնց առջեւ մանջանիքներ (պատերազմական մեքենաներ) դնել տուեց։

101 թ. մեռաւ Մուհամեդ ի. Մրբվան ի. Հակամ, Աբդուլմալիքի եղբայրը, որ կառավարեց Միջագետք, Հայաստան եւ Ատրպատական եւ բազմիցս ասպատակեց Յունաստան եւ Հայք։

102 թ. Օմար ի. Հուբայր յարձակեցաւ յունաց վերայ Հայաստանում, Միջագետքի եւ Իրաքի սահմաններին կից։

104 թ. մուսլիմների զօրքը Ջուբայր նահրանի հրամանատարութեան ներքոյ Հայաստանից մտաւ խազարաց երկիրը։ Խազարք՝ որոնց օգնութեան եկան Քափջաք եւ այլ թուրք ցեղերը՝ մեծ բազմութեամբ դուսարուեցան եւ՝ պատահելով մուսլիմներին Մարջ Հիջարայ (քարքարոտ հովիտ) կոչուած տեղում՝ ճակատեցան նոցա հետ սաստ-

---

1 Մահմեդականաց 5-րդ ամիսն է։